საქართველოს
სახალხო დამცველი
Վրաստանի Ժողովրդական
Պաշտպան

Վրաստանի Ժողովրդական Պաշտպան Երաշխավորությամբ դաստիարակելու և Վերաինտեգրման Պետական Ենթածրագրերի Կարգավորման մասին

,,Երեխան, որը ժամանակավորապես կամ մշտապես զրկված է սեփական ընտանիքի միջավայրից կամ, որը սեփական լավագույն պայմանների պատճառով չի կարող մնալ նման միջավայրում, պետության կողմից ունի առանձնահատուկ պաշտպանության և օգնության իրավունք''

(ՄԱԿ-ի Երեխայի Իրավունքների Համաձայնագիր (CRC) հոդված 20(1).

Ի՞նչ է նշանակում երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագիր:

Երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագիրը երեխայի համար հոգալու այլընտրանքային ձևերից մեկն է: Այն նշանակում է պետության և ընդունող ընտանիքի միջև կնքված պայմանագրի հիման վրա ընդունող ընտանիքի կողմից անչափահասի դաստիարակություն և խնամում:

Երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրերի ինչպի՞սի ծրագրեր գոյություն ունեն:

Երաշխավորությամբ դաստիարակելու հիմնական ձևը ոչբարեկամական երաշխավորությամբ դաստիարակությունն է, թերևս բենեֆիցիարների մեծ մասը ընդգրկված է բարեկամական կամ անհապաղ (երեխայի անհապաղ երաշխավորությամբ դաստիարակելու տեղավորման մասին որոշումը ընդունելուց հետո ոչ ավելի, քան 90 օրացուցային օր) երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրում:

Ո՞վ կարող է համարվել երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրի բենեֆիցիար:

Երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրի բենեֆիցիար կարող է համարվել մինչև 18 տարեկան անձը, որը պետության և ընդունող ընտանիքի միջև կնքված պայմանագրի հիման վրա, երաշխավորությամբ դաստիարակելու նպատակով հանձնվել է ընդունող ընտանիքին:

Ո՞վ կարող է համարվել ընդունող ընտանիք:

Խորթ մայր/հայր կարող է դառնալ Վրաստանի քաղաքացին, Վրաստանում կարգավիճակ ունեցող քաղաքացիություն չունեցող անձը կամ Վրաստանում մշտապես բնակվող օտար երկրի քաղաքացին, ով ցանկանում է անչափահասին երաշխավորությամբ դաստիարակել (այդ թվում՝ անհապաղ երաշխավորությամբ դաստիարակելու դեպքում) և որը գրանցման նպատակով դիմել է խնամակալության և հոգաբարձության մարմին՝ սեփական բնակատեղիի համաձայն:

Ո՞վ է ընդունում որոշում երեխայի երաշխավորությամբ դաստիարակությունում ընդգրկվելու մասին:

Անչափահասի երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրում ընդգրկվելու մասին որոշումը կայացնելու իրավասությունը տրվում է խնամակալության և հոգաբարձության մարմին: Խնամակալության և հոգաբարձության տարածաշրջանային խորհուրդի կողմից (այսուհետ - տարածաշրջանային խորհուրդ) երաշխավորությամբ դաստիարակելու մասին որոշման կայացումը կիրականացվի՝ սոցիալական աշխատողի կողմից երեխայի պայմանների և անչափահասի երաշխավորությամբ դաստիարակել ցանկացող անձանց հնարավորությունների մասին իրականացված հետազոտությունների և պատրաստված եզրակացության հիման վրա: Նշված դրույթը չի վերաբերվում անհապաղ երաշխավորությամբ դաստիարակելու դեպքերին:

Ինչպե՞ս է կատարվում որոշման կայացումը երեխայի երաշխավորությամբ դաստիարակությունում ընդգրկվելու մասին:

Անչափահասի երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրում ընդգրկվելու գործընթացում մեծ դեր է կատարում սոցիալական աշխատակցի եզրակացությունը համատեղելիության մասին: Եզրակացության պատրաստման ժամանակ պետք է պաշտպանված լինեն հետևյալ սկզբունքները՝ երեխայի և ընդունող ընտանիքի համատեղելիությունը սեռի և առողջական վիճակի հետ, անչափահասի մոտ ազգային, կրոնական և մշակութային միջավայրում դաստիարակվելու անհրաժեշտությունը, երեխայի երաշխավորությամբ դաստիարակել ցանկացող անձանց ընտանիքի երեխաների քանակը (ոչ ավելի քան յոթ), 10 տարեկան անչափահասի համաձայնությունը ենթածրագրում մասնակցելու վերաբերյալ, քույր-եղբոր, քույրերի և/կամ եղբայրների բաժանման անթույլատրելիություն, բացի այն դեպքում, երբ այն համապատասխանում է նրանց հետաքրքրիություններին, հաշվի է առնվում երաշխավորությամբ դաստիարակվող կամ խորթ մոր/խորթ հոր միջև տարիքային տարբերությունը (ոչ պակաս 16 տարի):

Ելնելով նշված եզրակացության բովանդակությունից, խնամակալության և հոգաբարձության տեղական մարմինը առաջարկում է խորթ մորը/խորթ հորը երեխայի երաշխավորությամբ դաստիարակություն: Բացառություն է համարվում անհապաղ երաշխավորությամբ դաստիարակության դեպքը: Վերջին դեպքում երեխայի հանձնման մասին որոշումը տարածաշրջանային խորհրդի նախագահը կայացնում է սոցիալական աշխատակցի կողմից պատրաստված եզրակացության հիման վրա:

Երեխայի երաշխավորությամբ դաստիարակելու պայմանագիր

Երեխայի երաշխավորությամբ դաստիարակելու պայմանագիրը պետք է պարունակի՝ երեխայի հոգածության և նրա դաստիրակության պայմանները, խորթ մոր/խորթ հոր իրավունքները և պարտականությունները, խնամակալության և հոգաբարձության մարմնի, ինչպես նաև երաշխավորությամբ դաստիարակվողի իրավունքները և պարտականությունները, կողմերի պատասխանատվությունը, պայմանագիրը դադարեցնելու պայմանները:

Երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրին մասնակից բենեֆիցիարի իրավունքները

Երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրին մասնակից բենեֆիցիարը օգտվում է միջազգային կամ ներպետական փաստաթղթով հաստատված իրավունքներից և ազատությունից: Երաշխավորությամբ դաստիարակվող երեխաները ունեն իրավունք՝ լինել պաշտպանված բռնությունից և այլ տեսակի ոչ համապատասխան վերաբերմունքից, աշխատանքի հարստահարումից, աղքատության և կենցաղի անհամապատասխան մակարդակից, ապահովված լինել անվտանգ և ֆիզիկական/մտավոր զարգացման անհրաժեշտ դաստիարակության պայմաններով, ունենան կանոնավոր փոխհարաբերություն բիոլոգիական ընտանիքի հետ, ձեռնհաս լինեն ստանալու որակավոր կրթություն և առողջապահություն:

Ընդունող ընտանիքի պարտականությունները

Ընդունող ընտանիքը երաշխավորությամբ դաստիարակվող երեխայի նկատմամբ ունի հետևյալ պարտականությունները՝ հոգալ երաշխավորությամբ դաստիարակվողի համար անհատական զարգացման ծրագրին համապատասխան, ստեղծել երաշխավորությամբ դաստիարակվողի համար ընտանեկան նորմալ պայմաններ, տեղեկացնել խնամակալության և հոգաբարձության մարմնին երաշխավորությամբ դաստիարակվող երեխային ճնասարար պայմաններ և միջավայր ստեղծելու մասին, նպաստել երաշխավորությամբ դաստիարակվողի հարաբերությանը սեփական օրինավոր ներկայացուցչի և այլ բարեկամների հետ, բնակվել երաշխավորությամբ դաստիարակողի հետ:

Ընդունող ընտանիքի ֆինանսական ապահովման կարգավորումը

Երաշխավորությամբ դաստիարակվողի խնամքի ծախսերը մարվում են Վրաստանի պետական բյուջեյից՝ համաձայն «Սոցիալական օգնության մասին» Վրաստանի օրենքի: Երաշխավորությամբ դաստիարակելու համար ընդունած սոցիալական օգնության չափը սահմանում է կառավարության 2006 թ. հուլիսի 28-ի N 145 որոշումը, ըստ որի, ոչ բարեկամական երաշխավորությամբ դաստիարակությունում գտնվող առողջ երեխայի համար ամիսը տրվում է 450 լարիի, իսկ սահմանափակ ունակություններով բենեֆիցիարի համար 600 լարիի չափով: Բարեկամական երաշխավորությամբ դաստիարակությունում գտնվող առողջ անչափահասի համար ամիսը 200 լարիի, իսկ սահմանափակ ունակություններով երեխայի համար 300 լարիի չափով: Անհապաղ երաշխավորությամբ դաստիարակելու դեպքում մեկ բենեֆիցիարի համար պետությունը վճարում է 600 լարի:

Ի՞նչ պարտականություններ ունի պետությունը երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրում գտնվող երեխայի նկատմամբ:

Երաշխավորությամբ դաստիարակվող երեխայի իրավական իրավիճակի ստուգման համար, ինպես նաև ընդունող ընտանիքի կողմից պայմանագրով ստանձնած պարտականության կատարման մոնիտորինգի համար պատասխանատու է խնամակալության և հոգաբարձության մարմինը: Սեփական պարտականությունների կատարման նպատակով, երեխայի երաշխավորությամբ դաստիարակության հանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում, ոչ պակաս շաբաթը մեկ սոցիալական աշխատողը պարտավոր է՝ իրականացնել այցելություն ընդունող ընտանիքին նախնական համաձայնությամբ կամ առանց համաձայնության և ուսումնասիրել երեխայի իրավական իրավիճակը: Բենեֆիցիարի դաստիարակության հանձնելուց հետո մեկ ամիս անց սոցիալական աշխատողը այցելությունը ընդունող ընտանիքին իրականացնում է ոչ պակաս ամիսը մեկ: Այն դեպքում, եթե սոցիալական աշխատողը կբացահայտի երաշխավորությամբ դաստիարակվողի համար ճնասակար միջավայր, նա պետք է պատրաստի եզրակացություն՝ պայմանագրի ծամանակից շուտ դադարեցնելու մասին տարաշրջանային խորհրդին ներկայացնելու համար:

Ի՞նչ է նշանակում վերահնտեգրման ենթածրագիր:

Վերահնտեգրման ենթածրագիր նշանակում է տարաշրջանային խորհրդի որոշման հիման վրա, պետական հոգածության ներքո գտնվող երեխայի վերադարձ՝ բիոլոգիական ընտանիք, խնամակալի/հոգաբարձի մոտ: Վերահնտեգրման ընթացքում պետք է իրականացվի ընտանիքի սոցիալական ձևավորման բարձրացում, նրա հզորացում և երեխայի պետական հոգածության ներքո վերադարձի ռիսկի նվազագույնին հասցնում:

Ո՞վ կարող է լինել վերաինտեգրման ենթարկվող երեխա:

Վերաինտեգրման ծրագրին կարող է մասնակցել անչափահասը որը գտնվում է պետության հոգածության ներքո, այդ թվում մանկատան և երաշխավորությամբ դաստիարակելու ենթածրագրում:

Ո՞ր մարմիններն են իրավասու վերաինտեգրման ընթացակարգի իրականացման համար:

Տարածաշրջանային խորհուրդ. ա) սոցիալական աշխատողը եզրակացության հիման վրա քննարկում է երեխայի վերաինտեգրման հարցը և կայացնում է որոշում՝ նրա բիոլոգիական ընտանիք, հնարավոր խնամակալ/հոգաբարձի մոտ վերադարձի/տեղակայման մասին, բ) կայացնում է որոշում վերաինտեգրման օգնություն նշանակելու, կասեցնելու, նորացնելու կամ դադարեցնելու մասին:

Խնամակալության և հոգաբարձության տեղական մարմին.

Իրականացնում է՝ իր գործող տարածքի վրա պետական հոգածությունում գտնվող յուրաքանչյուր երեխայի բիոլոգիական ընտանիքի, հնարավոր խնամակալ/հոգաբարձի բացահայտում, նրանց մասին տեղեկատվության համակարգում և կատարում վերաինտեգրված երեխայի իրավիճակի մոնիտորինգ:

Սոցիալական աշխատող. ա) գնահատում է պետական հոգածությունում գտնվող երեխային, նրա բիոլոգիական ընտանիքին և սոցիալական միջավայրը, բ) մշակում է վերաինտեգրման իրականացման համար համապատասխան երաշխավորություններ և ներկայացնում տարաշրջանային խորհրդին, գ) մշակում է երեխայի անհատական զարգացման ծրագիրը, դ) վերաինտեգրումից հետո աջակցում է ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը, ե) իրականացնում է միջադեպի կառավարում և փաստագրում:

Երեխայի վերաինտեգրման հնարավորության սահմանման ընթացակարգ

Երեխայի վերաինտեգրման համար հոգածությունը պետք է սկսվի մասնագիտացված հաստատությունում կամ երաշխավորությամբ դաստիարակության ենթածրագրում ընդունման օրից: Սոցիալական աշխատողը պարբերաբար աշխատում է պետական հոգածությունում գտնվող երեխայի և բիոլոգիական ընտանիքի հետ, նրա ուժեղացման և ծնողի ունակությունների բարելավման ճանապարհով: Սոցիալական աշխատողը ոչ պակաս վեց ամիսը մեկ գնահատում է մասնագիտացված հաստատությունում կամ երաշխավորությամբ դաստիարակության ենթածրագրին մասնակից յուրաքանչյուր երեխայի վերաինտեգրման հնարավորությունը: Գնահատման արդյունքում, դրական եզրակացություն կտրվի բիոլոգիական ընտանիքի, հնարավոր խնամակալ/հոգաբարձի կողմից՝ նախատեսելով երեխայի հիմնական անհրաժեշտությունների բավարարումը և բռնությունից պաշտպանությունը:

Բենեֆիցիարի անհատական զարգացման ծրագիր

Անհատական զարգացման ծրագիր նշանակում է սոցիալական աշխատակցի կողմից պատրաստված փաստաթուղթ, որտեղ նկարագրված կլինեն երեխայի ֆիզիկական/մտավոր զարգացման և նրա անվտանգ վերաինտեգրման նպատակով նախանշված միջոցառումները: Դրա հետ մեկտեղ, սոցիալական աշխատողը անհատական զարգացման ծրագրում նկարագրում է ընտանիքի հզորացման խնդիրները: Անհատական զարգացման ծրագիրը հաստատվում է տարածաշրջանային խորհրդի կողմից:

Ինչպի՞սի առանձնահատկություններով է բնութագրվում երեխայի վերաինտեգրման մասին պայմանագիրը:

Վերաինտեգրման պայմանագիրը ձևակերպվում է երեք տարվա ժամկետով, կամ համապատասխան ժամկետով մինչև երեխայի չափահաս դառնալը: Պայմանագրի շրջանակներում երեխան ապահովված է վերաինտեգրման կողմից, անխտիր նրա բիոլոգիական ընտանիքի սոցիալ/տնտեսական վիճակի: Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, եթե սոցիալական աշխատողը համարում է, որ երեխայի բարօրությունը ապահովելու համար ընտանիքին անհրաժեշտ է պայմանագրի երկարաձգում, ապա նա համապատասխան եզրակացությունը ներկայացնում տարածաշրջանային խորհրդին:

Վերաինտեգրման օգնության նշանակման և հանձնման կարգը

Վերաինտեգրման օգնություն (նպաստ) նշանակվում է վերաինտեգրվող երեխային, սակայն տրվում երեխայի օրինավոր ներկայացուցչին: Վերաինտեգրման օգնությունը տրվում է ամեն ամիս պայմանագրով հաստատված ժամկետով: Վերաինտեգրման օգնությունը (նպաստը) 90 լարի է առողջ երեխայի համար, իսկ սահմանափակ ունակություններով բենեֆիցիարի համար՝ 130 լարի:

Վերաինտեգրված երեխայի օրինավոր ներկայացուցչի իրավունքները-պարտականությունները

Վերաինտեգրված երեխայի օրինավոր ներկայացուցիչը ունի իրավունք. ա) ստանալ վերաինտեգերման օգնություն (նպաստ), բ) լրացուցիչ կերպով ստանալ ոչ նյութական օգուտ կամ/և այլ գումարային վճարումներ՝ համաձայն Վրաստանի օրենսդրության, գ) վերաինտեգրված երեխայի պետական խնամակալության/ հոգաբարձության ներքո գտնվելու ժամանակ օգտվել սոցիալական փաթեթի գումարից:

Վերաինտեգրված երեխայի օրինավոր ներկայացուցիչը պարտավոր է՝
ա) անհապաղ տեղեկացնել գործակալությանը վերաինտեգրված երեխայի համար փասակար պայմաններ ստեղծելու մասին, բ) վերաինտեգրված երեխայի կյանքում տեղի ունեցած փոփոխությունների մասին դիմել գործակալությանը փաստի կայացումից հինգ օրվա ընթացքում՝ բնակավայրի կամ կոնտակտային լրատվության փոփոխություն, փոփոխություն ընտանիքի կազմում, նյութական վիճակի վատթարացում, երեխային սահմանափակ ունակություններ ունենալու կարգավիճակ շնորհել/դադարեցնել, վերաինտեգրված երեխայի օրինավոր ներկայացուցչի հետ մեկ ամսով հեռանալու հնարավորություն, մեկ տարի ժամկետով վերաինտեգրված երեխայի օրինավոր ներկայացուցչի հետ միասին, ինչպես երկրի ներսում, այնպես երկրից դուրս գնալու կամ այդ ժամկետով նրանից հեռանալու հնարավորության մասին, երեխայի բուժման կամ վերականգման նպատակով, օրինավոր ներկայացուցչի պատճառով վերաինտեգրված երեխայի օրինավոր ներկայացուցչի հետ երեք ամիս ժամկետով հնարավորության բացակայություն, պաշտպանել երեխայի իրավունքները և իրականացնել համապատասխան հոգածություն:

Ինչպե՞ս է իրականացվում վերաինտեգրման դեպքի կառավարումը և մոնիտորինգը:

Երեխայի վերաինտեգրումից մեկ ամսվա ընթացքում ոչ պակաս շաբաթը մեկ, սոցիալական աշխատողը այցելում է ընտանիք նախնական համաձայնության կամ առանց համաձայնության, երեխայի բարօրության գնահատման, ընտանիքի պահանջների հաստատման և անհատական զարգացման ծրագրի իրականացման աջակցության նպատակով: Պայմանագրի գործունեության ժամկետում, սոցիալական աշխատողը պարտավոր է իրականացնել այցելություն նվազագույնս ամիսը մեկ, իսկ անհրաժեշտության դեպքում մի քանի անգամ:

Սոցիալական աշխատողը մոնիտորինգ է անցկացնում վերաինտեգրված երեխայի դաստիարակման, առողջության վիճակի զարգացման, կրթության, նրա օրինավոր ներկայացուցչի կողմից պարտականությունները իրանականացնելու համար: Բացի այդ, սոցիալական աշխատողի պարտականության մեջ մտնում է երեխայի օրինավոր ներկայացուցչի հետ կոնսուլտացիաների անցկացումը վերաինտեգրման և ընտանիքի հզորացման հետ կապված հարցերի շուրջ:

Փաստաթղթեր, որոնք պարունակում են երաշխավորությամբ դաստիարակելու և վերաինտեգրման ծրագրին մասնակից երեխայի իրավունքները՝ Վրաստանի օրենսդրությունը, ՄԱԿ-ի երեխայի իրավունքների Համաձայնագիր (CRC), ՄԱԿ-ի բանաձևը երեխայի այլընտրանքային հոգածության մասին (A/64/434), երեխա վերցնելու և երաշխավորությամբ դաստիարակելու մասին օրենքը, Վրաստանի Աշխատանքի, Առողջության և Սոցիալական Պաշտպանության նախարարի հրամանները՝ «Վերաինտեգրման օգնության նշանակման, կասեցման, նորացման կամ դադարեցման կարգը և պայմանները, ինչպես նաև դրա հետ կապված այլ հարաբերությունների սահմանման մասին» (N01–20/Ն, 20/03/2014), «երաշխավորությամբ դաստիարակելու ձևերի և ընթացակարգի հաստատման մասին» (N51/Ն, 26/02/2010):

Վրաստանի ժողովրդական պաշտպանը երեխայի իրավունքների պաշտպանման համար՝ ինչպե՞ս դիմել ժողովրդական պաշտպանին

Երեխայի իրավունքների պաշտպանությունը Վրաստանի ժողովրդական պաշտպանի ապարատի գերակայություններից մեկն է: Նշվածը իրականացնելու նպատակով ապարատին կից գործում է երեխայի իրավունքների կենտրոնը, որը իրականացնում է անչափահասների իրավական վիճակի մոնիտորինգ Վրաստանի ողջ տարածքում: Վրաստանի ժողովրդական պաշտպանի ապարատին դիմելու իրավունք ունի՝ Վրաստանի քաղաքացին, օտար երկրի քաղաքացիները, և քաղաքացիություն չունեցող անչափահասները, ովքեր գտնում են, որ պետական/տեղական ինքնակառավարման մարմինների կողմից խախտվել է իրենց իրավունքները և/կամ հիմնական ազատությունները, կամ ցանկացած երրորդ դեմքը (այդ թվում չափահասը), ում համար հայտնի է դարձել երեխայի իրավունքի / հիմնական ազատության ենթադրվող խախտման մասին:

Ժողովրդական Պաշտպանի Ապարատի
կողմից տրված ծարայությունը անվճար է և
իրականացվում է գաղտնիության և
անկողմնակալության սկզբունքների վերապահմամբ:

Թբիլիսի
Նինո Ռամիշվիլիի փ. 6
Հեռ: 0322 23 44 99
Հեռ: 0322 91 38 14

Զուգդիդի
Կոստավայի փ. 58
Հեռ: 0415 22 36 11
Բջջ: 577 50 52 34

Մառնեուլի
Ռուսթավելիի փ. 1
Հեռ: 375 22 19 70
Բջջ: 593 17 18 55

Բաթումի
Մազնիաշվիլիի փ. 9
Հեռ: 0422 27 05 44
Բջջ: 577 50 52 31

Գորի
Սամեբայի փ. 1
Հեռ: 0370 27 05 49
Բջջ: 577 78 27 42

Թելավի
Չոլոդաշվիլիի փ. 36
Հեռ: 0350 27 99 27
Բջջ: 591 88 35 38

Քութաիսի
Ռուսթավելիի փ. 18
Հեռ: 0431 25 33 50
Բջջ: 577 55 33 81

Ախալքալաքի
Ճավճավաձեի փ. 4
Հեռ: 0362 22 32 83
Բջջ: 577 12 27 70; 577 12 27 71

www.ombudsman.ge
info@ombudsman.ge

Վրաստանի Ներքին Գործերի Նախարարություն – Պարեկային Ոստիկանության թեժ գիծ– ,,112''.
ՀԻԻԱ Սոցիալական Ծառայության Գործակալություն – թեժ գիծ – ,,1505''.
Վրաստանի Կրթության և Գիտության Նախարարություն – թեժ գիծ – 0322 20 02 20

unicef
unite for children

Հրատարակված է ՄԱԿ-Ի Երեխաների հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ